LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT
LOS ANGELES SCHOOL POLICE DEPARTMENT

Պետի գրասենյակ
125 North Beaudry Avenue, Los Angeles, California 90012
Հեռախոս՝ (213) 202-4508 – Ֆաքս՝ (213) 202-8676

ALBERTO M. CARVALHO
ՎԵՐԱԿԱՑՈՒ

PEDRO SALCIDO
ՓՈԽՎԵՐԱԿԱՑՈՒ

AARON PISARZEWICZ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԹԵՄԱ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՁԵՆՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԾՆՈՂԻ/ԽՆԱՄԱԿԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի ծնող/խնամակալ՝

Մեր աշակերտների և անձնակազմի անվտանգ կրթական մթնոլորտի ապահովումը մնում է մեր հիմնական առաջնահերթություններից մեկը: Մենք բոլորս տեղյակ ենք մեզ շրջապատող համայնքներում և ամբողջ ազգի մեջ զենքի միջոցով կատարված բռնությունների մասին: Կալիֆոռնիայում ամեն տարի մինչև 18 տարեկան միջինը 27 երեխա մահանում է իր տան անդամներից որևէ մեկին պատկանող զենքով ինքնասպանություն գործելուց: Զենքի հետ կապված այս դեպքերի մեծ մասում, անչափահասն օգտվել է իր կամ իր ազգականի բնակության վայրում գտնվող օրինական ձեռք բերված զենքից: Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը քայլեր է ձեռնարկում, որպեսզի ապահովի դպրոցների անվտանգությունը, կանխելով զենքի միջոցով կատարված բռնությունը: Ցանկացած աշակերտ, ում մոտ դպրոցում կհայտնաբերվի հրազեն, ենթակա կլինի անհապաղ ձերբակալման, հեռացման և հեռացմանը: Որպեսզի նպաստենք աշակերտներին հրազեններից պաշտպանելու ջանքերին, մենք կցանկանայինք ձեր ուշադրությունը հրավիրել զենքի անօրինական պահպանումից անչափահասներին պաշտպանելու հետ կապված իրավական պարտավորություններին: Խնդրում ենք ուսումնասիրել զենքի պահպանման վերաբերյալ երկու (2) օրենքերը, որոնք ամփոփված են ստորև.

- Շատ սահմանափակ բացառություններով, Կալիֆորնիայում անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում ցանկացած հրազեն պահելու համար՝ լիցքավորված կամ ոչ լիցքավորված, իր հսկողության տակ գտնվող վայրում, որտեղ ըստ իր գիտելիքի կամ օբյեկտիվ հասկացողության երեխան, ամենայն հավանականությամբ, հասանելիություն կստանա հրազենին առանց ծնողի կամ օրինական խնամակալի թույլտվության, և երեխան ստանալով հրազենից օգտվելու հնարավորություն դրանով իսկ (1) ինքն իրեն կամ որևէ անձի մահ կամ վնասվածք է պատճառում, (2) հրազենը տանում է տարածքից դուրս կամ որևէ հասարակական վայր, ներառյալ ցանկացած նախադպրոցական կամ դպրոցական դասարաններ (մանկապարտեզից մինչև տասներկուերորդ դասարան), կամ դպրոցի կողմից հովանավորվող ցանկացած միջոցառման, գործունեության կամ ներկայացման վայր, կամ (3) ապօրինի կերպով հրազենը տալիս է ուրիշներին:[1]
    - **Ծանոթագրություն.** Քրեական պատիժը կարող է զգալիորեն ավելի մեծ լինել, եթե ինչ-որ մեկը մահանա կամ մեծ մարմնական վնասվածք ստանա երեխայի կողմից հրազենին հասանելիություն ստանալու հետևանքով:
- Շատ սահմանափակ բացառություններով, Կալիֆորնիան նաև հանցագործություն է համարում անձի կողմից անզգուշությամբ պահել կամ թողնել որևէ հրազեն՝ լիցքավորված կամ ոչ լիցքավորված, իր տարածքում այնպիսի վայրում, որտեղ ըստ իր գիտելիքի կամ օբյեկտիվ հասկացողության երեխան, ամենայն հավանականությամբ, հասանելիություն կստանա հրազենին առանց ծնողի/օրինական խնամակալի թույլտվության, նույնիսկ այն դեպքում, երբ անչափահասը **երբեք** իրականում չի դիպչել հրազենին, բացառությամբ այն դեպքերի, երբ ողջամիտ քայլեր են ձեռնարկվել՝ կանխելու երեխայի հասանելիությունը զենքին:[2]
- Ի լրումն հնարավոր տուգանքների և ազատազրկման ժամկետների, 2020 թվականի հունվարի 1-ից զենքի սեփականատիրոջը, որը քրեական պատասխանատվություն է կրում Կալիֆորնիայի այս օրենքների համաձայն, սպառնում է 10 տարի ժամկետով հրազեն ունենալու, պահելու, վերահսկելու, ստանալու կամ գնելու արգելքը:[3]
- Վերջապես, ծնողը/օրինական խնամակալը կարող է նաև քաղաքացիական պատասխանատվություն կրել իր երեխայի կամ խնամակալության տակ գտնվող երեխայի հրազեն օգտագործելու հետևանքով առաջացած վնասների համար:[4]

Ատրճանակների անվտանգ պահպանում, Լոս Անջելեսի մունիցիպալ օրենսգիրք, բաժին 55.21
Համաձայն Լոս Անջելես քաղաքի կանոնադրության, բնակության վայրում ատրճանակ պահպանելը հանցանք է, եթե այն պահված չէ փակ կոնտեյներում կամ վրան դրված չէ Կալիֆոռնիայի արդարադատության բաժանմունքի կողմից հաստատված ձգանի փական:

Հրազենի հանցավոր պահպանում, Կալիֆոռնիայի քրեական օրենսգիրք, բաժին 25100(A)
Համաձայն այս նահանգային կանոնադրության, ցանկացած տարածքում լիցքավորված հրազենի պահպանումը հանցանք է համարվում այն դեպքում, եթե դուք գիտեք կամ բանականորեն պետք է իմանայիք, որ երեխան հնարավորություն ունի մոտենալու հրազենին և երեխայի մոտենալը հրազենին մահվան կամ ծանր մարմնական վնասվածքի պատճառ է դառնում:

Կարող եք ազատորեն առբերել վերը նշված օրենքների ամբողջական տեքստը մանրամասների համար: Շնորհակալ ենք, որ օգնում եք մեզ պաշտպանել մեր երեխաներին և դպրոցները: Հիշեք, որ օրենքին համապատասխանելու ամենահեշտ և անվտանգ միջոցը ձեր հրազենը փակ կոնտեյների մեջ պահելն է կամ փական օգտագործելն է, ինչը հրազենն անգործունակ է դարձնում:

Հարգանքով,

Ահարոն Պիսարզեվիչ
Ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Լոս Անջելեսի դպրոցի ոստիկանության բաժին

----------ԿՏՐԵՔ ԱՅՍՏԵՂԻՑ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ----------

ՁԵՆՔԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ — ՀԱՍՏԱՏՄԱՆ ՁԵՎ, 2025-2026

Խնդրում ենք ստորագրել ներքևում՝ հաստատելով, որ ստացել եք տեղեկությունը:

Աշակերտի անուն (տպատառ)՝ _____

Ծնողի/խնամակալի անուն (տպատառ)՝ _____

Ծնողի/խնամակալի ստորագրություն՝ _____ Ամսաթիվ՝ _____

[1] *Տես* Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի բաժին 25100 մինչև 25125 և 25200 մինչև 25220.
[2] *Տես* Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի բաժին 25100(c):
[3] *Տես* Կալիֆորնիայի քրեական օրենսգրքի բաժին 29805:
[4] *Տես* Կալիֆորնիայի քաղաքացիական օրենսգրքի բաժին 1714.3: